

Պարսից ներսն ինադաւորը 297ին գոյն Հոովմայեցւոց թուգուց, սակայն Կորդուք գէթ ըստ մասին՝ Պարսից իշխանութեան տակ մտաւ, և 363ին Յովիանու խաղաղութեամբը ամբողջապէս Պարսից անցնելով անոնց ձեռքը մտաց. Յոյնք և Հոովմայեցիք մեզի տեղեկութիւն չեն տար այն նահանգին տարածութեան վրայ, որ միշտ ըուն Կորդուքին սահմաններուն մէջ ամփոփուած չէր:

Փաւստոսի քով որ Դ. դարու պաւստութիւնը կը գրէ, կ'երեւայ թէ Կորդուք, Կորդիք և Տմորիք՝ երեք երկիրները կը համապատասխանեն Ամմիւնոսի Gorduena անուանած երկրին:

Խորենացւոյ քով Տմորիք դարձած եղած է Կորդիք, որ աշխարհագրութեան մէջ իբր երբորդ Կորդիք կը ներկայանայ: Խորենացւոյ աշխարհագրութիւնը Կորդուքէն ու երբորդ Կոր-

---

Իււրդերու պատմականապէս փոխտարիւն ու լեռնական դառնալը կը հաստատեն ուրիշ գիտնականներ, որ սլաւի տեսննք իրենց կարգին ւ (Երես 241). — «Բեռնագրութիւնք միենոյն աղբին ու երկրին նոյն անունը կու տան երեք տարբեր ընթերցուածներով, Ամուրաի, Մատաի, և Մադաի ւ Առջ Մատաի հետ կը համեմատէին Մատիանացիները, որ Ուրմիոյ լճին շուրջը բնակող ժողովուրդ մ'էին՝ ամենահին ատեններն իսկ իբր Յառաջակողմեան Ասիոյ ամենանշանաւոր աղբերն մին՝ Ալես գետէն մինչև Ուրմիոյ լիճը տարածուած ըլլալով ւ Շատ անհաւանական է որ Մադաի և Մատաի անուններն իրարմէ տարբեր ըլլան ւ»

(Երես 292). — «Հոյաստանի տարածութեան և սահմաններուն վրայ ամենեւին տեղեկութիւն չեն տար Գորեհի (522—486) արձանագրութիւնները որ մէյմը Հոյաստանը Մարաց և Կադադովկիոյ (Beh. 1, 15), մէյմ'ալ Եփրատի և Կադադովկիոյ մէջտեղը կը յիշեն ւ Ըդհահալուակն Հերոդոտոս կ'ըսէ (5, 49, 52) թէ Հոյաստանն է Մադիենէի և Կիլիկիոյ մէջ՝ վերջապէս Եփրատով բաժանուած. կ'ըսէ թէ Եփրատէն գէպի արեւելք 56½ փարսաի կը տարածուէր (Այստեղ հասկցուածն է հարաւային Հոյաստանը վերին Տիգրիսի վրայ, Եփրատէն մինչև Կորդուաց աշխարհը ւ)

Մատիացիք Կորքիացւոց և Մարաց մէջտեղը բնակող Մասպիացւոց (1, 104, 4, 37.) և Ալարտեանց հետ կը կաղմէին Գորեհի տրոց 18րդ շրջանակը (3, 94.) իսկ Հոյք Պակտիացւոց (?) (ըստ Սիեկլինի Atlas antiq.